

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

## Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի Ն

**Մ**րպիսի իցէ բնութեամբ և տես-  
լեամբ վիճակեալն յաստու-  
թեամբ և ի մարդկանէ՝ մասն  
երկրագնդիս, յորում ՚ի միջի  
վիճակաց այլոց ազգաց, և յառաջ  
քան զյորովս ՚ի նոցունց, ծանեան և  
ծանուցան Հայք՝ սեփական տոհմ մի  
մարդկութեան, սփռեալք յանդորրու-  
կամ յարամրի՝ ՚ի գերագոյն գետահո-  
վիտս զուգահեռ դնացից Եփրատայ և  
Տիգրիսի, Երասխայ և Կըրի, Սլիւսայ և  
Խոխայ, և յետոյ ուրեմն Սարոսի և  
Պիւռամիսի, զորս և գիտացին և ա-  
նուանեցին իւրեանց Հայրենիս. — որ-  
պիսի անտեսութեամբ քաղաքավարե-  
լով առտնին և ընդ օտարս, կեցին, և  
գործեցին այս քառասուն և աւելի  
դարք, թերևս հարիւր և յիսուն ծնըն-  
դովք յառաջնոյ անտի նահապետէն  
իւրեանց՝ սերեալ յորդուց յորդիս,  
մերթ ինքնիշխանաբար և մերթ ընդ-  
օտարի միջամուխ ձեռամբ, ըստ ուղ-  
ղութեան ամենախնամ ալոյն, որ ՚ի  
վերուստ զլիսոց անուանեալ զլիսոց եր-  
կրի՝ վարէ զմարդկութիւնս ընդ հուն  
ժամանակի՝ յեզր յաւիտենից. — քա-  
նիօն ՚ի սեփական յայնմ հայրենական  
աշխարհախումբ հրապարակի՝ դէպք  
կենցաղականք և իրակարգութիւնք գոր-  
ծոց, քանի շահախնդրութիւնք, որ-  
քան յուզմունք և բարձրագիմակ յեղա-  
փոխութիւնք. — որպիսի ձեռակերտք  
յերեսս երկրին՝ ՚ի պահուստ կամ ՚ի

պարծանս կենաց. որպիսի արձանք և  
արձանագրութիւնք՝ մրցողք մոռացու-  
թեան, և անմահութեան կարծեցեալ  
ախոյեանք. — որքան արարոց մնա-  
ցորդք, աւերակք և դերբուկք կուտա-  
կեալք խառնեալք յերեսս և յընդերս  
երկրի, զորս ծանակէ և ծածկէ արօր  
հողագործին, (զգայուն եթէ անզգայ  
նախնեացն նշխարաց). — որքանու-  
թիւն գերեզմանաց համօրէն տոհմից  
և պայազատութեանց իսպառապու-  
անհետ եղելոց՝ ընդ անվերանալի կա-  
փարչաւ անցելոյն, որ համահաւասար  
հարթէ զամենայն հասակ և կերպա-  
րանս, զբարձրութիւնս և նուստու-  
թիւնս, զվայելչութիւնս և տառապանս,  
զյաղթող և զյաղթեալ, զհարստահա-  
րող և զհարստահարեալ. — որպիսիք և  
յագարակս անդ մահու՝ տակաւին կան-  
գունք կամ կիսաքանդ տաճարք պաշ-  
տաման Սէմահին. որքան և որդանուի-  
րականք հոգեոր և մտաւոր հրահանգաց  
վայրք՝ ՚ի չէնս և յանչէնս. վանորայք  
միաբան միախոհ ընկերաց, կամ մե-  
նանոց և մատրուկք ՚ի փապարս և ՚ի  
կատարս լերանց մեկուսացեալք, իբրև  
յերկրէ յերկին վերելս խնդրելով, և ընդ-  
խնկոց զխանդս հոգւոց հրախառն հա-  
ռաչանք սփռելով ՚ի հեշտալուր բար-  
ձունս. — քանի սլացք և խոյանք մտաց,  
ցնորք և դիւտք բանաստեղծից, գրուածք  
իմաստասիրաց, աղերսք աղօթկերաց,  
երգք գուսանաց, զեմունք և բղխմունք

սրտի, և համասփիւռ բարեառք և ար-  
ձագանգք սիրոյ՝ նպատակեալք 'ի հա-  
մագոյս համակիրս, կամ հասեալք,  
հարեալք և հալեալք, կամ իրել յա-  
պառում՝ ապառաժից մերժեալք և վը-  
րիպեալք. — քանիպատիկ հանդէսք  
հրճուականք և եղբրականք. ոհ, որ-  
քան հեղեղք արեան խառնեալ ընդ  
աղբերս կաթին, և արտասուք ընդ  
քրտանց վիժեալ 'ի դէմն անարօրս և ա-  
րօրեալս. որքան ճգունք և մահունք  
նահատակաց՝ 'ի վերայ հաւատոց և  
հայրենեաց. — և համարէն ասել, որ-  
պէս յանընդհատ հոսանս անդ հայա-  
սեռ աղգուածեանս՝ մերթ ուռճացելոյ  
և մերթ նուաճեցելոյ, 'ի հաշտ և յան-  
հաշտ աղմբի խռովեալ և խաղաղեալ  
դարուց և դիպաց, 'ի չփոթութեան  
մտաց և հնարից, 'ի ճոճման զինուց և  
խաչից, զիսրդ անշփոթ և անարգել  
ներգործէին կամք Աստուածութեան՝  
'ի բազմաժամանակեայ և 'ի բազմայե-  
ղանակ աշխարհիս Հայաստանեայց...  
Ջայստսիկ և զայսպիսի՝ ըղձանայի ի-  
բրև 'ի քառասուն ամաց հետէ, յոր-  
դորեալ 'ի թերագրութենէ հայրենա-  
սիրաց ամանց և յիմոց ընդաբոյս ասոր  
ժակաց, հետադասել և 'ի գիր արձա-  
նացուցանել, ընծայելով երբեք երբեք  
փորձս ինչ կամ ճաշկս. որպէս և յա-  
ռաջ քան զամս չորս՝ զՏեղագրութիւն  
գաւառի միոյ Այրարատաշխարհի, զԵւ-  
րասիոյ. յորոյ և 'ի յառաջաբանին ծա-  
նուցի, զի եթէ ոչ ըստ նմին օրինակի  
ընդարձակ՝ այլ և ոչ համառօտ՝ կամէի  
տեղագրել զմի մի յաշխարհաց և գա-  
ւառաց Հայոց, Գործ՝ թերևս յանդուգն  
և մանրամասն չափով, որ և գամ քան  
զգամ ընդարձակէր ընդ ըղձիցս և ընդ  
նորանոր ծանօթութեանց 'ի վեր ե-  
րևելոց. սակայն և ոչ անհնար 'ի զլխա-  
ւորել, եթէ բովանդակ երկարութիւն  
այնքան ամաց ծախեալ էր 'ի նոյն, և  
ոչ դադարեալ և լքեալ երբեմն վասն  
իրիք իրիք պատճառաց՝ զոր ոչ է հարկ  
հոլանել:

Յընթացս այնր պարագայի ստորա-  
գրեալ էր իմ զմեծ մասն կամ զյուրովս

աշխարհաց Հայոց Մեծաց, որք եթէ  
մի ըստ միովէ հրատարակեալ էին՝  
կարծեմ թէ և ոչ անընդունակք լինէին  
բանասիրաց. իսկ այժմ՝ ըստ յուրիւ  
ամաց և յաճախել և փոփոխել դի-  
պաց, 'ի յայտնել նորանոր աշխարհա-  
դրական ծանօթութեանց, և մանա-  
ւանդ յերևել ստուգագոյն և մանրա-  
մասն տեղացոյց տախտակոց, յորոց  
զուրկ էի յառաջն յայնժամ, ևս և 'ի  
գտանել արուեստի լուսատիպ նմանա-  
հանութեան, 'ի վերայ հասաննն բա-  
նադիտակք՝ զի 'ի դէպ է հնոցեալս  
համարել զնախագրեալսն առ յինէն՝  
երեսուն և աւելի ամօք յառաջ, և  
հարկ՝ միւսանդամ վեր 'ի վայր յեղյե-  
ղել և ուղղել, և ըստ այնոցիկ և ընդ  
այնոսիկ՝ չարագրել և բոլորել զմնա-  
ցեալ մասունն երկրին Հայոց: Իսկ առ  
այս՝ անպատրուակ դիմօք և կամօք  
խոստովանիմ զպարտութիւն. այլ յա-  
ւելում և ըստ աւետարանական տըն-  
տեսին, զի եթէ զայդ « Գործել ոչ կա-  
րեմ, և մուրանալ ամաչեմ », այսինքն  
է, մինչ չարի և զորութիւն տիոց և  
յուշոյ՝ ոչ ևս ներեն մտադիր գեգերել  
յայնպիսի գործ՝ թող թէ բովանդակել,  
տակաւին ոչ հանդուրժէ հնացեալն և  
ունակացեալ իղձ՝ չառանալ հարեւանցի  
և համառօտ ստորագրութեամբ համ-  
րէն հայկական անուանեալ աշխար-  
հաց՝ իրեւ քսանից, յորս՝ եթէ հնար  
էր՝ կամէի քայլ առ քայլ յաճել և գծել:  
Արդ՝ զալարագոյն հասակի և ժրագոյն  
գրչի, նաև աղողագոյն ժամանակի թո-  
ղեալ զերկնեալս յինէն խորհուրդ լա-  
ւագոյն ևս կերպարանել և ծնանել,  
մինչ հարկ և օրէն է ինձ տեղի տալ  
յասպարիզէ, յորում թէ ոչ այլով  
իւրք՝ դոնեա իմովս պասկեցայ ալեգք,  
փափագէի՝ զի ժամանակն միայն և զե-  
րագոյն կամք՝ լինէր ինձ յաղթող, և ոչ  
վատթարապէս նահանջարեկէր, կամ՝  
ճրճէր և ցրէր ժանգահար ժանեղն,  
բայց եթէ տապաստ գնելով 'ի սեռամ  
լուսակոխ տաճարի Աստուծոյ, առ որ  
միշտ ըղձացայ կառուցանել զակն ոգ-  
ւոյս, մինչ դեռ մարմնաւորս թափա-

ռեալ թափանցեալ մերթ ցոլայր ցըն-  
ծութեամբ և մերթ ցնդէր կակրծմամբ  
'ի պրակս և 'ի պատկերս երկրաւոր  
հայրենեացն, և 'ի յիշատակս՝ որք և  
յերկրի և յերկինս մնան անթառամ:  
Քանի՜ զծով և զետնաքարչ է սիրտ՝  
զոր ոչ արծարծիցէ կայծակն յուսոյ  
կենաց հանդերձելոց:

Սկիզբն տեղագրութեան Հայաստա-  
նեայցս արարեալ էր իմ'ի հիւսիսային  
արեւմտեան մարզից, յեղեբաց Պոն-  
տոսի մխելով 'ի ծործորս Ճորոխի, և  
անցանելով 'ի գետահովիտ վտուակայ  
կամ բնիկն Եփրատայ (Ֆրադ), ապա  
'ի կուր գետոյն, անդուստ ոլորեալ  
զկասպիական ծովափամբ՝ խոտորէի  
յօտարախառն Տիգրիս, 'ի հուն ելա-  
նել 'ի բնահովիտս Հայոց՝ յերասխայն  
և յԱրածանոյ, և դառնալ 'ի փոքր  
Հայս և աւարտել 'ի կիլիկիա. իսկ  
այժմ՝ աւազիկ հակառակ չըջմամբ՝  
ուր զկատարածն առնել կամէի՝ անդ  
առնեմ սկիզբն և աւարտ. (անստոյգ  
ժամանակի թողեալ՝ եթէ աջողիցէ  
թափել մասն ինչ 'ի միջոյն, և երբ և  
զիարդ և է հանել 'ի լոյս): Բայց պատ-  
ճառ զլիսաւոր՝ 'ի յօգուցն աշխարհաց  
նախընտիր առնելոյ զՍիսուան, որպէս  
հաւանեցայ կոչել զկիլիկիա և ծանու-  
ցի զպատճառն (յէջ 59), այս է՝ զի 'ի  
վաղուց հաւաքեալ էր իմ գիտելիս՝  
յաւէտ պատմականս՝ զայսր աշխարհի,  
և նշանակեալ համառօտիւք, զորս ոչ  
էր դիւրին լուծանել և վերծանել յե-  
տամնացիցն իմոց. իսկ վերստին հաւա-  
քել նոցա, թէպէտ գուցէ լիազոյն ևս.  
այլ կրկին և երկար լինէր վաստակ.  
վասն որոյ բուռն հարի թափել 'ի կու-  
րբստնէն զայնքան թռուցեալ և հեռա-  
ցեալ ամաց և ժամուց գիծս և նիշս,  
և ամփոփել (թէ և ոչ զբովանդակն)  
յայսմ մատենի: Ընդ սմին և մերձաւո-  
րութիւն ժամանակի քաղաքական ան-  
ցից ազգայնոցս յայսմ նահանգի, հա-  
մարիմ՝ թէ հետաքննելի զսա ըն-  
ծայեսցեն քան զբնաւս, թէպէտ և  
բստ այլ տեսութեանց՝ առաւելուցուն  
հրապոյրք աշխարհաց Մեծաց Հայոց:

բայց չիք և ոչ մի իբրև զՍիսուան՝ որ  
կարիցէ կցորդել զսերկեան ազգիս ընդ  
երկեանն ժամանակի, յորում տակա-  
ւին անձնիշխանութեամբ քաղաքավա-  
րէր 'ի միջի և ընդ այլոց ազգաց. միան-  
գամայն և երկար տեւողութիւն տէ-  
րութեան համազգեսաց աստ՝ 'ի միջի  
չհամազգեսայն կալով, այլ եւ որպէս  
ոմն 'ի զգօնից նոյին ժամանակացաց  
գրէր, շուճանակի ունելով չորեքդիմի  
գիշատիչս, յորոց և վիշապն՝ յելու-  
զակք ծովուն. և ոմն յայժմու արև-  
մտեան դրաց՝ տակաւին գաղտնիս և  
առեղծուած մի պատմութեան համա-  
րի՝ զայնորինակ և զայնքան բաւել տե-  
ւել տէրութեան Ռուբինեանց յայնպի-  
սի դիրս: Թող և զբազմապատիկ յա-  
տուկ կերպարանս այնր ժամու տնտե-  
սութեան ազգայնոցս՝ որ առանձին և  
որ ընդ քրիստոնեայ և անքրիստոնեայ  
տէրութեանց, յերի եւ երբեմն կցորդ-  
զուով երկոցուն հակառակամարտիցն.  
զընտելութիւնս ընդ արեւմտեայն եւ  
կեղեցւոյ, լեզուաց եւ հրահանգաց,  
զգործակցութիւնս ընդ վաճառական  
ընկերութեանց, զխնամութիւնս ընդ  
յոյն և փռանկ թագաւորական և իշ-  
խանական տանց և տոհմից, զհաղոր-  
դակցութիւն շահու և տեսութեանց  
եւրոպեական պետութեանց: Յաւելցի  
'ի սոսին և եզական դիրք երկրին,  
միակ 'ի Հայաստանեայս՝ հուպ և պա-  
տեալ 'ի կենսատու և շահաբեր ծովէ,  
յորոյ կակուղ կոհակս թուէր իմն  
պարզել Սյասաւ՝ դբարգաւաճ ծոց իւր՝  
հայակիլիկեանն Սիսուան, յետ հաստ  
առնելոյ զթիկունսն 'ի հարստակողն  
Տաւրոս:

Եղապիտութիւնը դիպաց և դրակ-  
ցաց՝ քան համաբաւական հոսանք ժա-  
մանակի՝ փոխակերպեցին, ողորկեցին,  
ապա և մաշեցին զգաղթականն հին-  
աւուրց Հայոց՝ յայսմ աշխարհամէջ  
մարզի կիլիկիոյ: Ի բովանդակ յառա-  
ջնումն երկից դարուց հարստութեան  
Ռուբինեանց՝ տակաւին նախնականն  
նշմարի 'ի նոսա տիպ՝ խոժոռ և հուժ-  
կու, յաւելուածով մահուչափ իմն վայ-

րենախառն անդուլթեան՝ յասպատա-  
կել 'ի կորզել զկայս և զկայանս յու-  
նական կուսակալաց, առ 'ի բնակու-  
թիւն և 'ի պատասպարան մղելոցն և  
խուսելոց 'ի սկիւթական բռնութենէն.  
յերկրորդումն՝ չնայխարհիկ հանճար  
լինձին լեւոնի՝ յանկարծօրէն թօթա-  
փեալ զերեւոյթն և զկոչումն լեւնցի,

փոփոխէ կամ պատուաստէ յարեւ-  
մտեան նրբութիւն, գողջիր ամենայն  
տարազու, 'ի վարսից հերաց և յագա-  
նեւեաց՝ մինչև 'ի ծէսս, 'ի բարբառ և  
յօրէնս (Աստիզս) փռանկաց և լատի-  
նաց. և բազում մասամբ յառաջագէմն  
յարեւելայս Հայկազն, առաջին՝ թե-  
րես և միակ 'ի նոսին գտանի և 'ի նի-



Երեւանի ք. Առաք.

զակակցութիւն և յոգի խաչակրաց. —  
Աշխոյժք լեւոնի և երկոցուն Հնթ-  
մեանց՝ որոց ժամանակ իշխանութեան  
բոլորէ զողջոյն զգարն երկրորդ, չեն  
ինչ նուազ յաշխուժից հետեւողացն  
Կոփրետեայ, Տանգրեայ և Պալտի,

նեանց. ոչ անփառունակք և անօ-  
գուտք՝ նահատակութիւնք մերայոցս՝  
յանձուկ սահմանի իւրեանց, քան զյու-  
լովս յանճաւ և յանշաւ չահատակու-  
թեանց նոցին Անգրաժովեայցն. Նոյն  
ոգի կամ մոլութիւն աւագութեան և

գահասիրութեան՝ վառի և ճարակի և յորդիս Ռուբինի և Հեթմոյ. յորմէ և բռնաբարութիւնը 'ի թագ, ըզձակերտութիւնը 'ի թագուհիս, հարստահարութիւնը վիճակաց, նուաճմունք ամբողջաց, ելեկը պարոնայց զմիմեամբը. որպէս յայտնապէս է տեսանել զայսոսիկ յետ մահուան առաջնոյ թագաւորին, և յայտնագոյն ևս 'ի բազմաթիւ և յեռանդուն որդիս Բ Լեւոնի. ի փութորկեալ հողովման այնր դարու, (որպէս երբեմն և յառաջն, սակաւ ինչ և յետոյ), 'ի յետումս յայսմ թատեր հայկական ինքնավարութեան, մերձ ընդ մերձ յարեան 'ի հանդէս կերպարանք նշանաւորք և փարեկը, խոտորք և քնդոյք, և մի ըստ միովէ պարելով 'ի տատանեալ յատակի անդ՝ տեղի ետուն, ոչ աննշոյլս թողով ուրուականս 'ի տրամազարդեալ տախտակի հայկական յիշատակաց, Յետ դիցախառն և ամեհամուղ պայազատաց Ռուբինի, Թորոսեանցն և Լեւոնեանց, որոց վերջին՝ կորիւնն ստեփանեան՝ 'ի գագաթն զօրութեան և փառաց հասուցանէր և հաստատէր զպետութիւնն, յաջորդէ աշնուագոյնն 'ի սեռս պարոնայցն, Հեթմոսեան տուն, նահապետութեամբ Մողոնն կորստանդնի՝ քեռորդոյ Լեւոնի. կենդանի խնամք արձանացեալ յորբեւան մի ամաց՝ մատաղատունկ գերդաստանի, յոր զուգէ զպայազատն արքայական՝ զաշնուագոյնն Զապել, ճարտար և ճապուկ հանճարով, առատ և ահարկու ձեռամբ, անսայլթաք վարելով զկառս տէրութեանն՝ լծեալս ժիրաժիր անդրովարդ իւրածին զաւակօրն: Առ նովաւ և յետ նորա՝ հօրամոյնն Հեթմոս՝ երկարակեացն յիշխնութեան՝ քան զամենայն տեսարս Սխտանայ՝ որ յառաջ եւ որ յետոյ, լնու զայն բազմապատիկ արիական և աշխարհալէն գործոց արգասեօք. մի 'ի ցանկալի և արժանափառ թագաւորական կերպարանաց. ոչ լոկ 'ի տոհմայնումս՝ այլ և 'ի համաշխարհական պատմութեան, և յիւրումս ժամանակի՝ ոչ ումք երկրորդ, բայց

արդեօք Սրբոյն Լուդվիկի՝ Փռանկաց թագաւորի. ոգի եռանդնոտ, ասպետ կատարեալ և բազմաց կատարիչ ասպետաց՝ բնկաց և օտարաց. քաջակորով և հանճարեղ, շինարար և զուարթարար. խորագիտութեամբ հօրն և իւրով քաղցրութեամբ՝ ամբեալ զթագարական բրտութիւնն և յիւր զօրուիդն կրթեալ, որպէս և ինքն ոչ անզօր զօրաւիդն հզօրին Հուլաղուի, կայաներկեւան յիւրումս կայի, յաջ եւ յահեակ ընդլայնելով գնոյն. բերկրեցուցանէ բազմանուագ հանդիսարանօք զաշխարհն համօրէն՝ որպէս զմի տուն նահապետական, յաճախ 'ի նոյն հրաւիրելով խրախճան՝ զիշխանազունս աւրեւեան Լատինաց, յորոց ոչ սակաւք փեսայացեալ էին յիւր կամ յիւրայոցն զստերս և 'ի քորս. ասպարիզական պերճանօք և հեծելութեամբ կայտառ ձիաւորաց իւրոց՝ ոչ միայն նախանձելի յարգարեալ զՍխտան, այլ և 'ի նոյն յանկուցեալ և դասակարգեալ զարուորագոյնս 'ի փռանկական երկտասարդաց... Այլ, մարդ ոչ անխոցտեղի 'ի բաղդէ, յետ քառասնամեայ զգուսնացն՝ վտանգեալ երկուտեք, յեղիպտականն ռուսութենէ և 'ի թագարաց թուրքութենէ, զհեղով զանդին կեանս տարփալի որդեկացն՝ 'ի սուր և 'ի գերութիւն, վասն փրկութեան հայրենեաց և ազգի՝ 'ի մազկոխն կորստեան հասելոյ, ուր զէն բխէր և անկարանայր՝ անդ զհանճարն սրեալ, աջողէր տակաւին կարկատել զիրամատ պետութեանն. յոր՝ կայկայեալ զծիրանածին անդրանիկն սքանչելապէս գերեթալի, բարեաւ մնայ ասէ այնուհետեւ ամենայն փառաց և փայլմանց, և յանձկութեան միանձնական խըցկան՝ մակարական անուամբ և կրօնիք՝ փոխի յանանց թագաւորութիւն, փառաւորեալ 'ի կեանս, դերափառ 'ի մահուն. հետեւող յայսմ շաւղի եղեալ հոմանուան իւրում՝ տեսուն Լամբրունի, եղբօր սքանչելոյն Ներսիսի, և հետեւողս ինքեան թողեալ զերկոսին ևս համանուանս, զեղբօրորդին

Հիթում տէրն Կոռիկոսի և Պատմիչն, և զԹոռն իւր՝ Հիթում Բ:

Յետինս սա՝ նորահաշ թանայ յաշխարհի ճանապարհ կենաց, ընդ մէջ արքունի ապարանից և խտտալիւթ մենաստանի. երկրորդմբ ևս զուգապէս վայելացեալ, և քան զյորդոնս 'ի զգօնից և 'ի քաջաց գերազանցեալ. աշխուժիւ և բազմաղան հանճարով՝ թեռնա ոչ ումեք կրսեր 'ի տան Սիսուանայ, բաց յԱ Լեւոնէ. կրօնասիրութեամբ և իմաստասիրութեամբ անհամեմատ առաւելեալ. արքայ աշխարհատեսուք ամենայն օրինք և արժանեօք, այլ ոչ թագաւոր. օրինակաւ իւր իմանել կամեցեալ առաջնոյն որքայից երուսաղեմի, որոյ պատկառեալ 'ի փշեղէն թագէն Յիսուսի՝ չառնոյր յանձն ոսկով պսակել անդէն. ոչ իւր նուազեալ յառաջնոյն, այլ և առաջին խաչակիր յիւրումն ժամանակի, և աջողագոյն 'ի լծակցել զխաչ ընդ սուսերի. մերթ 'ի թանձրաստեւ ձուռնձ այլ և 'ի ցնցոտիս սրովքէասարաս Ասսիզացոյն պարուրեալ՝ սքեմաւորաց հաւասարի. մերթ 'ի նոյն պարկեշտ պարէզօտ՝ զրահս և վարապանակս վերարկեալ՝ խրոխտալով աշտանակէ 'ի նժողոս ալեուսեան դաշտաց. ձայն տայ բանակաց, վառէ վարդէ վանէ մինչև յեմեսա, 'ի Գամասկոս, մինչև 'ի բըրգունս փարաւոնաց. և սրբազանեալ սուսերան՝ նշան քաջութեան թողու զպատառուած ամրակուռ դրանց ոստանի ոսոխին, և զյաղթանակն ձնէ գերեզմանի փրկին. զպատերազմն յուզէ, զխաղաղութիւն հաստատէ. դաշինս կռէ բարեկամութեան և տուրեառիկ ընկերահաշտ վաճառականութեան. և անդրէն սուրալով թանգուզէ 'ի մթին մենարանում, վերապանալ աղօթանուէր մտք՝ ընդ սիրելոյն իւրոյ փրանկիսկեայ՝ յանմատոյցն հասարակաց պարունակ երեքարբենին, և մարգել զհանապազալան բազուկան՝ 'ի մատուցումն խնկոյ, որպէս և 'ի ճօճիւն նիզակաց: Անձն և միտք յարաշարժ յարակիրթ. 'ի Սիս կենդորոնա.

ցեալ՝ ձկտի 'ի ծագս արեւելից՝ 'ի ճամբարս Ղանին Մոզողաց. դառնայ յարեմուտս 'ի գուռն Բիւզանդական կայսեր. սմա՝ զբոյր իւր ընծայէ 'ի հարսնութիւն՝ սովորակի սաղմոսելով, և Խաջցէ դշտոյ ընդ ալմէ քումէ Եմամ՝ զայլ ոմն կոյս մատուցեալ՝ առաւել քան 'ի սէրն՝ 'ի հաւատս նորին յորդրէ և 'ի պաշտպանութիւն հաւատակցացն քրիստոնէից. և անդրէն դառնայ 'ի վայրս իւր դաշարիս և 'ի ջուրս հանգստեանն, միսրճել յալիս աստուածախոհութեան, յընթերցուածս եւ 'ի գրուածս պէսպէս. և իսկ և իսկ ազգումն առեալ ճեպի յօտան հայրենի, ցրէ զմախան բարձաձիգ եղբարցն, դաստիարակէ զեղբորորդեակն գեռաբուսիկ, փոխանակ իւր թագաւոր կարգելով. ընդ որում՝ ապա առաճանեալ 'ի բարբարոս սատրկանէն, իբրև դայեակ ընդ դայեկորդոյ՝ խողխողեալ անկանի. եղբրականաւ՝ առ ազգայինս իւր կընքեալ զկենանն, երանական պաշտամամբ յիշատակեալ առ օտարազգի կրօնակիցսն, ընդ որս կենցաղաւարելով, անմոռաց ունէր զուխտ հայրենի եկեղեցոյն եւ զպարութիւն: — Ոչ պտնծալիք իբրև զսա՝ այլ և ոչ աննշանք 'ի պատմութեան երկութեանն եղբարք իւր վեցեղին. մին (Թորոս) 'ի միւսմէն լարիւ աղեղան խեղդամահ լեալ. սա (Սմաւոս) որ զվրէհին ժըպըրհութիւն եցոյց 'ի Հիթմեանս, 'ի միւսոյ ևս եղբորէ (կոստանդնայ) մերժեալ լինի, և երկւքին միանգամայն 'ի Հիթմոյ, որում սոյ առնեն երկինք՝ լուցանելով անդրէն զշիջուցեալն 'ի նախանձուէ եղբայրասպանին՝ զաշացն լոյս: Ի հեռանալ չորեցուն եղբարցն յարքունի թատերէն՝ յառաջ մատչին կրսերքն երկուորեակք, յարգանդէ յեռեալք անմեկնելի սիրով, զոր բեկանէ՝ այլ ոչ լուծանէ՝ անժամ աշխոյժ երկվարին Ալիսխայ՝ տրոփելով 'ի յորձանս Կիւղճոսի, յորմէ բարձեալ որպէս գաղիչ գետաւմոյն որայից՝ որդեալ զնի յարտառուս սիրայնոց եղբորն և արքայի Օշնի՝ Յայնպիսեաց աշխար.

հաճուի ժխտմանց և 'ի կասկածելի կենաց հարազատացն՝ սարսուցեալ կրսեալագոյն նոցին եղբայրն եօթնե-  
րորդ, Ներսէս-Ռուբէն, 'ի խաղաղ-  
կան և քաւչական պաշտօն Ոստուծոյ՝  
զանձն նուիրէ, զմիտմն և զմատունս՝  
'ի կցորդիչն երկին և երկրի յարուեստ  
զմայլական, յերաժշտութիւն. զորթուի  
իմն անբաւական նրբից զգացմանց ու  
գւռոյն գտանելով՝ կարճակտուր կենօք  
յերկնայնոցն ճեպել երգակցութիւն :

Ոչ ինչ յետեալ յաւագասիրութե-  
նէ եղբարցն, տինա և առաւելեալ  
փառասիրութեամբ՝ քոյր նոցին ան-  
դրանկածին, գոռոզն Զապլուն, գոռո-  
ջագունի լծակցեալ փեսայի՝ Լիւզի-  
նեանն Սմաւրեայ՝ եղբօր և կապտողի  
թաղաւորին կիպրոսի, զլզղին զայն և  
զՍիսուան՝ ընդ ամս երկարս ընու աղ-  
մկաւ զինուց և վիճից, յերկար պատ-  
գամօք սրբազան Քահանայապետին և  
աւագ որերոյ, մինչև երկրորդին և ա-  
մուրքն՝ զրաւին բռնի մահուամբ, նա՝  
յիւր ապարանսն դաւաճանեալ, սէ՝  
թերեաւ չուսուողոյն՝ յարգելան բան-  
տի յոխորտացեալ կոմսին կոռիկոսի,  
յորմէ՝ ապա նոյնպէս զմահու լուծանէ  
վրէժ՝ Լիւնն Գ, հուսկ թագակիր շա-  
ռաւեղ Հիթմեանց : — Բայց եթէ Զա-  
պլուն և կամ յառաջ քան զնա Ալիծ՝  
դուստր Բ Ռուբինի, հանգոյն արուաց  
մաքառելով՝ բռնաբարէին զլարծուն  
բարձս աւագութեան, այլազգ անդոր-  
րագոյն հանդիսից ցանկացողք եղեն  
յոյովք 'ի փարագուն օրիորդաց Սիսուա-  
նայ. անազանեալ դստերք միծանց  
այնոցիկ Տիկնայց ձիւնեղէն լեռանց ա-  
րեւեանն Հայոց, փթթեալք աստանօր  
'ի ծաղկածին շերմահովտս Զահանայ  
և Սարոսի, ծիրանազգեացն Զապեք  
և Կեռանք, Ֆիմիք և Ալիծք, ոչ միայն  
'ի հայրենի դղեակս, այլ ցանկացեալք,  
հրաւիրեալք և պերճացեալք 'ի պա-  
լատս կայսերաց Կ. Պօլսի և Նիկիոյ,  
յարքունիս կիպրոսի և Անտիոքայ, և  
յիշխանատունս ծովեզերացն Ստրուոց,  
կայսրուհիք, թագուհիք, բրէնցեպք,  
մարէշալէսք և սենեալալէսք, որպէս

կոչէինն յայնմ ժամանակի. ընդ հո-  
մասեռսն համապատիւս արեւմտեայս  
կամ փռանկուհիս՝ համաբարբառ շքր-  
թամբք և համաշարժ թաթիւք տոհո-  
րակելով, զրուցատեղեցին, երգեցին  
և կարեաւեցին. և շատր՝ յիշելով զան-  
հրաժէշտն վերլոտնումն՝ հաւատաւո-  
րաց սեւաշուք քօղով ծածկեցին յետոյ  
զլիջնափառ վայելչութիւն երբեմն աւ-  
նախտիղ փաղփեալ երեսաց իւրեանց  
և զերեսաց աշխարհի. որոց վեհագոյն  
չնաշխարհիկն Զապել՝ պայազատ մե-  
ծին Լիւննի. ոչ այնքան 'ի բարձրագի-  
տակ դարպասի հօրն և փեսային դըշ-  
խոյաբար նազէր 'ի դասս նաժշտաց և  
ներքինեաց, որքան մայրենի խնամով  
յիւրումն դաստակերտ հիւանդանոցի  
Ստոյ, առաւել քան դառատատուր  
ձեռնն՝ զսիրան դիւրագորով տարածա-  
նելով 'ի վերայ տկարաց և տնանկաց. —  
նորին դուստր տրտմազգեցիկն Ֆիմէ՝  
սխրալի տիկին Սիդոնի, գերագոյն սփո-  
փանս ոգւոյն զեղբայրագիծ աստուա-  
ծային տառն առեալ յեղյեղէր տատ-  
րակօրէն մնչմամբ 'ի մենակեաց աղօ-  
թանոցի. — և բազմածին մայր թա-  
գաւորաց և թագուհեաց լամբրունա-  
փայլն կիւս Աննա՝ հուսկ ամենայնի  
կրօնաւորութեամբ երկնէր զանձն իւր՝  
երկնից : — Այսպէս զիտացին քորք և  
եղբարք թագազունք և իշխանազունք՝  
ճոխաբար քաղաքավարել յաշխարհի և  
ընդ գերաշխարհիկսն վերճեմել թուէր  
իմն վաղահասոց կլիմային կիկիկոյ՝  
ճեպել բարգաւաճել զծնունդս Սի-  
սուանայ և ստիպել յեռանդն 'ի դործ,  
'ի փայլ և 'ի փառս, յերգ և 'ի պար  
յընթիւնեցուն և յաղթս, 'ի բարձ և  
'ի խաչ. իբրու այն թէ չափեալ էր նո-  
ցա սուրհանդակօրէն ընթացք ժամա-  
նակին. և յետ երկուց փառազգեաց  
դարուց ուրբինական պետութեան՝  
գայր հասանէր երրորդն դար կիսա-  
սեաւ, զհետ ձգելով զքօղն կափուցիչ  
թորդումական թագի, մինչ գրեալէն 'ի  
նմին պահու և համաշխարհական վա-  
րագոյր ամանակաց՝ վերարկուէր զՄի-  
լինն անուանեալ Դար անցից պատմու-

Թեան աշխարհի, և սկիզբն առնէր Նո-  
րոյն:

Մնմարթ է կարծեմ ճշմարտաւեր  
աշաց չտեսանել զայնպիսի նորաձևու-

թիւն կենաց Սիսուանետյց, և զբարե-  
մասնութիւնս՝ յոր վայելցիկն և յոր  
մարթ էր արդեօք լաւագոյնս վայելել.  
ոչ միայն Թագազունքն ասեմ և պա-



Ա Ն Ա Շ Ա

րոնայք, այլ և պուրճէսքն և պառի-  
կոսք, և փոքր մարդիկն, որպէս կո-  
չէինն յայնժամ զասք քաղաքացեաց և  
ռամկաց. և մի՛ի մեծագոյն զարմանա-

լեաց պատմութեան ժամանակին է՝  
տեսանել անդանօր ստէպ ստէպ հա-  
րուածս կսկծելիս, կոտորածս և աւե-  
րածս գրեալթէ յառհասարակ սահ-



ման երկրին, և իսկեւ իսկ նկատել ան  
դէն զչէնան կանգնեալս և զբնակա-  
րանս բազմամարդացեալս, իբրու եթէ  
'ի կլանել գերեզմանել դաշտաց զա-  
ռաջիննս, լերինքն և ականունք բոլսէին  
'ի բարձանց հոսանս և սերմանս մարդ-  
կութեան. որպէս է գուշակել զայս ա-  
մենայն ի՛նչ յիշատակաց սփռելոց և 'ի  
մատենիս յայսմիկ. և թէպէտ ոչ ունի  
սա լիովին և ոճով զպատմութիւն հա-  
րցատութեան Ռուբինեանց, այլ և ոչ է  
անբաւական ('ի գումարեւն միանգա-  
մայն գիրուագն նուաճման կիլիկիոյ 'ի  
Հայոց, զՊատմութիւն Մեծիկն Լեւոնի,  
զԺամանակագրական ցանկն, և զցրու-  
եալն 'ի տեղագրութեանս դէպս պատ-  
մականս), առ 'ի կազմել պատկեր մի  
ոչ փոքր, և ցուցակ ոչ վարկպարտի-  
քաղաքական, կրօնական և բանասի-  
րական կենաց այնր յատկանիչ ժամա-  
նակի և երկրի Հայոց: Ախորժիլ էր  
թերևս բազմաց՝ ճշգրտագոյն ևս յար-  
դարել զպատմականն այն պատկեր-  
այլ զի ոչ ներէին այդմ հանդամանք  
այժմեան ժամանակիս և կարևոր ինչ  
իմ գիտումն, զայն ոչ արարի: Սակայն  
ահա տեսանենք ընթերցողք՝ զի և չեղէ  
կարող լուել կամ զանց առնել զյոյժ  
նշանաւոր և կարևոր դիպուածովք և  
անձամբք, մանաւանդ զերկրորդն՝  
որք գրեթէ և յոչ կոմսի՝ յոճախ  
յանդիման լինէին յամենայն անկիւնս  
Սիսուանայ. Լամբրունեցին Ներսէս՝  
յեկեղեցական դասուէ, և Լեւոն Ստե-  
փանեան յաշխարհական պայազատաց:  
Ներսէս և Լեւոն, վեհագոյն հանդիսա-  
դիրք երկոցուն վիճակաց կենաց այնր  
ժամանակի, արժանաւորք 'ի հանդի-  
սանալ ընդ ամենայն վեհադուես աշ-  
խարհաց և դարուց. զորոց թէպէտ և  
բազում ինչ ասացեալ բազում ուրեք  
կարծիցիմ, այլ առ մեծութեան կեր-  
պարանցն՝ 'ի քննողական միտս տպա-  
ւորելով՝ տակաւին սակաւ ինչ և թե-  
թե թուին ինձ ասացեալքս. և ոչ կա-  
րեմ ըստ բաւականին գոհանալ և գո-  
վել զսորամուխ տեսութիւն ծերոյն  
այն Սամուելի, և զգրիչ Գրիգորի՝

Սկեռացեաց, որք առ կենդանեաւն  
կամ հուպ զինի՝ աւանդեցին մեզ ըզ-  
ցունկալի ծանօթութիւնս վարուց Սի-  
րելոյն Ներսիսի. այլ և զսորին ինքեան  
սրբամարուր մատուենն՝ սիրեմ համ-  
բուրել, որք յախայլ մասունս բազմա-  
թիւ հեղինակեալ և թարգմանեալ մա-  
տենից իւրոց՝ թողին յիշատակս զան-  
ձնէն: Բաղձայի այսպէս ասել և զլիա-  
պատում գրողէ վարուց և գործոց մե-  
ծին Լեւոնի՝ եթէ էր իմ գիտացեալ  
զանուն նորին, և մանաւանդ եթէ  
գտեալ էր և զգրուածն ցանկալի:

Այլ ասիցէ և այլ ոք թերևս՝ եթէ  
տեղագրութեան կիլիկիոյ էր աստանոր  
նպատակ մեզ և ոչ պատմութեան. —  
բայց ես, (որպէս սկիզբն բանիցս ե-  
ցոյց և վերնագիր իսկ մատենիս), ոչ  
կարեմ անջատել զպատմութիւն յաշ-  
խարհագրութենէ. այն զի բազում մա-  
սամբ ամայացեալ երկրիս մերոյ 'ի քա-  
ղաքական կերպարանաց՝ փոքու իւր  
զանազանին չէնն և անչէն, և եթէ  
զանց առնել էր զպատմականաւն՝  
հարկ լինէր զլիրանց լսկ և զժայռից  
ճառս ճառել, կամ թէ առ ապառաժս  
ոմանս: Քանզի առաւել քան զպատմա-  
կանն՝ պակասեցին ինձ աշխարհագրա-  
կան ծանօթութիւնք երկրիս Հայակի-  
լիկիոյ, և ոչ զոք գտի 'ի մերազգեացս՝  
յընթացս հնգից այս հարիւրոց դան-  
դաղ ամաց՝ որ յետ բարձման տէրու-  
թեան Ռուբինեանց, զլուխ մի ողջ ա-  
ւանդեալ զչինից կամ զաւերակաց  
տանն Սիսուանայ. բայց 'ի ցամաք էջ  
մի վիճակագրութենէ պատրիարքա-  
կան նահանգին Սոյո, և 'ի քանի մի  
թուղթ պատուական ստորագրութենէ  
բարեյիշատակ Հօր մերոյ Ղուկայ ին-  
ճիճեան 'ի Նորն Հայաստանի. և թէ-  
պէտ յառաջ քան զամս ինչ հրատա-  
րակէր օրագիր մի և ընկերութիւն մի  
ևս էր յանուն կիլիկիոյ, այլ ոչ ինչ  
յայտնեցին կարևոր. և տակաւին 'ի  
թաղնութեան միան դիր և նիւք եր-  
կերիւր կամ երեքհարիւր աւանաց,  
բերդորէից և վանորէից, որոց ոչ սա-  
կաւուց անուանք յարուցեալք 'ի թեր-

թից մեռելոց՝ նշանակեալ են 'ի մատե-  
նիս (1) . այլ յորովադունից քան զնո-  
սին շինաբնակ տեղեաց անուանք և ե-  
ղելութիւն իսկ ընդ դամբանական գը-  
նին կնքով լռութեամբ . նա և զերեզ-  
մանքն իսկ անյայտացեալք կամ անծա-  
նօթացեալք են , նոյն և աւերակքն ան-  
գամ և զերբուկը . մեռելութիւն կրկնա-  
մեռ , որ և զմահու չունի զարձան , թող  
թէ զկենդանարարն արձանագորութիւն .  
վրիպեալ անդ 'ի 'յուսոյ համազ-  
գեաց՝ այնքան սիրողաց և պանծացո-  
ղաց 'ի նախնիս , ( թող զրազմախօսան  
և բարձրախօսս 'ի ժողովս և յօրագիրս ,  
եռանդունս յառաջարկութիւնս , երա-  
գունս 'ի բանագատութիւն , 'ի դրուատ  
և 'ի պարսաւ , այլ ոչ դր (2) ) երեւցողց  
ուսումնական կամ հնագիտական քըն-  
նութիւն զ'յորմանցս՝ զորոց այժմու  
խնդիրս է ) , հարկ էր ապա դիմել առ  
օտարս , յերոպէացի ճանապարհա-  
գրաց քաղել շատ կամ սակաւ գիտե-  
լիս և տեսարանս տեղեաց , որոց ա-  
նուանք և խորագիրք մատենիցն զրոշ-  
մեալ են 'ի վերջ կոյս մատենիս . ընդ

որս բազում ուրեք օժանդակեցին ինձ  
պատուական և վաւերական գրուածք  
մեծահարուստ դիւանաց վատիկանի  
և վենետիկոյ , և այլոց ոմանց (3) : Բայց  
եթէ 'ի ժամանակակից ազգակցացս ոչ  
'ի նախնեաց անտի գտի երկակի օժան-  
դակս ինձ , զՅիշատակարանս զորոց  
նոցին գրելոց , յերկրի անդ և 'ի ժամա-  
նակի տէրութեան Սիսուանեաց , և  
զՊատմիչս : վերժանողք Տեղագրու-  
թեանս ակն յանդիման տեսանեն 'ի  
հատուածոց բանից 'ի սոյն յետլոց ե-  
թէ որքան օգտեցայ 'ի Յիշատակարա-  
նաց անտի , զոր քաղեալ էր իմ 'ի ձե-  
ռագրաց՝ որ 'ի մերումս մենաստանի  
հաւաքեալ կան և որ յայլ և այլ քաղա-  
քամարս Էւրոպիոյ , և զոր հաճեցան  
ոմանք յազգայնոց մերոց ընձեռել սի-  
րողապէս (4) . որպէս և ես շնորհս  
կալեալ նոցա՝ յանուանէ իսկ ախոր-  
ժեմ՝ նշանակել , նախ և արժանապէս՝  
զկրօնակից եղբարս՝ զՀարս Մխիթա-  
րեան Միաբանութեան վիեննայ . զՉե-  
նէսուզեան Մեսրոպ վարդապետ յԱ-  
միդ . և յատուկ ևս յիշատակաւ զայն՝

1 Թաւարտ հասեալ էր տպագրութիւն մա-  
տենիս և շարակարգէր յառաջարանս այս , յոր  
ժամ եհաս 'ի ձեռս իմ Միախնարաց իւրա-  
ցոյ Յունի ժամանակագրութիւն կիպոսի , վասն  
որոյ ոչ ևս էր ժամ քաղելոյ 'ի նման զգիտե-  
լիսն ինչ 'ի մեր պէտս . այլ աստանօր կարգ  
բանիս պահանջէ յիշել , զի սա երկիցս ասէ՝  
Հայոց իւրիկիոյ ունել Երկրորդ քաղաքս և  
քերդս անուրս , ( ε' Χώρας καὶ Κέντρος ) . լռեմ  
զմեղադրանսն՝ եթէ վասն էր կորուսին : Թե-  
րեւ ընդ քաղաքս համարիցի և զուանան մե-  
ծամեծս . յորս եթէ յաւելցին վանորայքն և  
անապատք , ահա ինչին իբրև 300 նշանաւոր  
շինատեղիք 'ի Սիսուան :

3 Այլ մուսնամ գերախոսիս Հ . իւրմայ Սի-  
պիեան , որ գերեզի և զեկեղեցոյ միոյ արձա-  
նագիրս՝ բազում լանիւ կորզեալ՝ ծանոց մեզ .  
(տ . յէջ 70) : Բառալ քան ընդ Խաղրճեան Հ .  
Ստեփանոս՝ եհան թրծեալ թղթով հաւասար  
շափով զգիծս արձանաց ոմանց փոխադրելոց  
'ի Տարսն (273) : -- Եւ քանզի զոր միանգամ  
գիտացի գրուած զ'իւրիկիոյ՝ յիշեցի այլ ուրեք ,  
յաւելից ընդ տոսին և զՄիքեղեմն ( Բանասէր  
բժշկից Բովսեփայ Շիմանեան ) Թորոս Լեւո-  
նի , հրատարակեալ յամի 1878 . որ է վիպասա-


նութիւն կենաց և գործոց Բ Թորոսի , 'ի վերայ  
ծանօթ պատմութեանն հիւսելով և զմտացա-  
ծին :

3 Կատարելութիւն գործոյս պահանջէր ար-  
դարև յետև 'ի կարգի բանիցս , կամ Եռե-  
լուած առնելով , զբնագիրս դիւանական գրուա-  
ծոցն այնոցիկ . այլ յորովութիւն նոցին՝ որք  
ստուարացուցանէին և ծանրագին ևս առնէին  
զմատեանն , և լեզուացն ( լատին , փռանկ , ի-  
տալ և սպանիացի ) անծանօթութիւն 'ի յոր-  
վից 'ի մերասեփոյս , թէպէտ և ցանկալի արև-  
մտեայց , իսկ կրկնութեամբ թարգմանութեանն  
առաւել ևս ծանրանալ զործոյս , այս ամենայն  
ստիպեցին զանց առնել զայնոցիւր . բայց միայն  
հայերէն բնագիրքն ինչ և սակաւ ոմանք յօ-  
տար լեզուաց՝ մուծան 'ի ներքս :

4 Առաջից և ինչ մի իբրև պարզօրէն 'ի գի-  
տութիւն և 'ի գարմանս ապագայ դարու , զոր  
ակն ունիմ խոհմեմագոյն քան զներկայս եղա-  
նիլ , զի և ոմանք զլացան , և այլք ոմանք եթէ  
ետուն ինչ՝ ճարտարեալ ծածկեցին զանուանս  
և զհեղինակս մատենիցն . և ուր առաւելապէս  
յուռայի էր ինձ գտանել յիշատակս պիտանիս՝  
այնքան պնդութեամբ ընդգէմ փակեալ էր , զի  
և բաղխել անգամ զգրուանս աւերորդ վարկայ :

որ ընտրեալ յիւրայոցն 'ի բարձրագոյն  
գլուխ աղգի, ոչ կամեցաւ առնուլ  
յանձն, և ես յոչ կամա հասարակաց՝  
յանկարծուց եթող պարապ 'ի շարա-  
մէջ կաթողիկոսացն Էջմիածնի, Պա-

տրիարքն Ներսէս, որ յօժարութեամբ  
ես ընդօրինակել 'ի մատենից մեծի ա-  
թոռոյն՝ յոր ընծայեալն էր, յիշատա-  
կարանս ինչ պիտանիս 'ի ծանօթու-  
թիւն տեղեաց և անձանց ոմանց Սի-



ՇԻՐԻՄ ՅԱՐՄԱ ԽԱՅՈՒՆԻ ՄԵՐԶ Ի ՆԻԿԻՏԷ


սուանեայց . և թէպէտ անկատար մնաց  
խնդիրն ըստ կենաց նորին, հարկադրէ  
ինձ հատուցանել զերպախտիս ոռ կա-  
մակատար իւր Գերապատիւ Եպիսկո-  
պոս Մեսրոպ Սմբատեանց, որ աղ-  
նուապէս և իւրով ձեռին վաստակաւ

լցոյց ըստ կարի՝ ղնորայն և զիմ փա-  
փազ :

Յորդազոյն ես աղբերք քաղաքական  
գիտելեաց՝ աներկբայապէս իցնն Պատ-  
միչք մեր ծանօթք, Մատթէոս Ուռ-  
հայեցի, Միխայէլ Անեցի և շարայա-

բող նորին ժամանակագրութեան, բա-  
րունն վահրամ վիպասանութեամբն՝  
որ փանաքի ինչ է, և լաւագոյն՝ Սմբատ  
Գունդատապլ՝ թէ և համառօտ, Հե-

թում Պատմիչ տէրն կոռիկոսի, որոյ  
աշխարհածանօթ Պատմութիւնն Թա-  
թարաց կամ Արեւելից (338) հրատա-  
րակեալ 'ի փռանկ և 'ի լատին լեզու՝



ՍՈՍ. — ՄԱՐԿԱՐԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՐԻԿՈՍ

ու յայտնեցաւ 'ի հայումն, բայց միայն  
համառօտ ժամանակագրութիւնն և  
նոյնպէս համառօտ Պատմութիւն կամ  
Աղգարանութիւն Ռուբինեանց։ Այլ  
ՊԵՏԿ Դ.

այսոքիկ ամենայն ոչ յերկարօրէն ճա-  
ռեն զլիսուանեայցս և ոչ լիովին ցվախ-  
ճան. միջին և յերկրայս մնայ բովան-  
դակ ժամանակն որ 'ի յետին ամաց

Դ Լեւոնի և անդր. միայն գէպը վերջնոյն (ե) Լեւոնի և կատարած տերութեանն՝ յայտնեցաւ յամս յայսոսիկ 'ի ժամանակագրութենէ փռանկ երիցու և յետոյ եպիսկոպոսի միոյ՝ Յովհաննէս Տարաթէ անուանելոյ, որ և զառաջնոց մերոց թագաւորաց և զպարոնայց կիլիկիոյ առնէ յիշատակութիւն, այլ սղալ կամ թերութիւն. սակայն զիարդ և է՛ պատուական է գործն. և որպէս 'ի սմանէ զվերջինսն՝ և զառաջնոցն մերոց յիշատակս քաղցեցի յայլոց փռանկ և լատին. ժամանակագրաց և պատմաց, զորոց գրուածս հաւաքեալ հրատարակեն արդ 'ի Բարիզ անուամբ Պատմչաց Խաչաւորաց և Լատին Արեւելոց, յարելով 'ի նոսին և զԱրեւելեան պատմիչս նոցին իրաց՝ զՀայս, Յոյնս և Արաբացիս, Ըղձալի էր յաւէտ և յազգայնոցս մերոց զասանել այսպիսի մանրապատում գրուածս. — Ըստ մասին լցին զայս իղձ՝ մատենաբերկու 'ի յետին ամբս հասեալը 'ի ձեռս իմ, և մին մերձ յաւարտ տպագրութեան մատենիս. առաջինն է նման Սմբատայն պատմութեան, յԱռհայեցւոյն քաղուած առնելով և շարայարելով զգործս Ռուբինեանց մինչև ցերկորդն Լեւոն, նոր և կարևոր դիպաց յիշատակք, զորս յեռեալ եմ 'ի կարգի Պատմութեանն Լեւոնի և 'ի տեղագրութեանս: Անյայտ մնաց անուան հնգինսկին. զի առաջին և վերջին թերթը մասանին գրելոյ 'ի վերջկոյս ԺԳ դարու կամ 'ի սկիզբն ԺԴ<sup>ր</sup>, որպէս և մասն 'ի միջոյն՝ անկեալ էին. վասն որոյ 'ի կարգի բանիցս կոչեմ զսա Պատմիչ կիլիկիոյ կամ Արքունի Պատմիչ, և կամ սոսկ Պատմիչ մեր: Անանուն մնայ և երկրորդին հնգինակ, այլ միայն վկայէ զանձնէն լինել երէց Երեքիսորան եկեղեցւոյ Սոյ 'ի կէս ԺԷ դարու. և է ժամանակագրութիւն կամ տարեգրութիւն՝ ո՞ճով Առհայեցւոյն, քաղելով յայլիայլ պատմաց, որպիսիք են Միխայէլ: Վարդան, Կիրակոս, և առաւել՝ Սա. մուէլ Անեցի և շարայարողը նորին, և այլք անծանօթք, և յիշատակարանք

զորոց. ըստ այլեայլ հնգինակայն՝ այլայլի և ո՞ճ շարագրութեանն և յանդի 'ի ռամկականն. բազմադալ է և գրութիւնն. իսկ կարդ պատմութեանն հասանէ մինչև 'ի սկիզբն ԺԷ դարու, և յայտնէ ոչ սակաւ նոր և պիտանի դիտանիս, մասաւանդ զվերջնոյ (Գ) կոստանդնէ, և որ ինչ յետ բարձման թագաւորութեանն, բայց ոչ յիշէ զօրինակ բարձմանն, և բնաւ ոչ զԼիւզինեանս. ժամանակագիր կիլիկիոյ կոչեցի զսա 'ի Յաւելոսաճին:

Ակնարկեցի 'ի վեր անդր՝ զի յընթացս հիւսուածոյ Տեղագրութեանն՝ ծնաւ յիս խորհուրդ գրելոյ ուրոյն զգործոց Լեւոնի Մեծի, և առ անթերի զնոյն բովանդակիլ՝ հարկ եղև երբեմն երկրորդել զնախագրեալս 'ի Գրուագի երկրակալութեան Ռուբինեանց. այսպէս և այլուր՝ մերթ պատմական և մերթ աշխարհագրական հարկ ստիպեաց 'ի կրկնութիւն. իցէ ուրեք և առ միուցցութեան զայս արարեալ. որոց ներդրամիտս յուսամ զՀայրենասէրս, նոյնպէս և սակս այլեայլ օրինակագրելոյ զանուանս ինչ, որք բազմագոյն ևս օրինակօք այլայլեալ գտանին առ Նախնիս, և 'ի յիշատակել իմում զբանս նոցա՝ ըստ նոցին տառից աւանդեալ եմ զուղիղ և զսղալ. իսկ յիմ գրուածս՝ յետինքն և որ 'ի ցանկս՝ ընտրելիք են: — Արժան է ինձ յիշեցուցանել (մինչ զԼեւոնէ են բանքս) և զայս, զի սա Երկրորդ կոչի սովորաբար 'ի զասագիրս և 'ի նմանիս, այլ ես Առաջին կոչեմ (իբրեւ թագաւոր), ըստ հնագոյն պատմաց և ժամանակագրաց, որք միշտ երկրորդ գրեն զորդին ԱՀեթմոյ, Երրորդ՝ զԹոռն երկրորդին՝ զորդին Թորոսի. Չորրորդ՝ զորդի եղբօր սորին՝ Օշնի. ապա ուրեմն վերջինն Լեւոն Լիւզինեան՝ Հինգերորդ է և ոչ վեցերորդ, և այնպէս արժան է տրուհել և ընթեռնուլ զլատին տապանագիր նորին, և ոչ որպէս ընթեռնոյր և իմանայր Լանկուա և այլք. որպէս թէ Լեւոնդ այդ եղեալ իցէ Հինգերորդ Լատին քաղաւոր Հայոց. քանզի յա.

ուսմ քան զնա մի որ միայն յայնմ սե-  
ռէ թագաւորեաց, հօրեղբայր նորին՝  
Կի, իսկ հայրն՝ Ճուան՝ պայլ թագա-  
ւորութեան եկաց և ոչ թագաւոր (1) :  
Ձաղկարանութիւնսցա (Լիւզինեանց)  
ստուգեալ 'ի Տարաեւել և 'ի մերայոց՝  
յարեցի յԱղգաւոցնակն ի սերունց,  
յոր և յօղեալ իսկ էին 'ի մայրենի բնէ՝  
'ի Ձապլունէ՝ դստերէ Բ Լեւոնի :

Յիշատակ այսր բանի առաջնորդէ  
ինձ ազդ առնել վասն Աղգաւոցնակ  
պատկերիս համօրէն Հեթմեան տոհմի,  
զի յերիւրեցաւ ըստ աւանդութեանց  
մերոց պատմաց և տարեգրութեանց  
Մաղաքիայ Դպրի, և ըստ Աղգաւոցն-  
ակց Անդրաճովոյ (Familles d'Outre-  
mer), գործ փռանկ գրչի, զոր յերեւել  
է 'ի հայ և մերս Հեթմուճ պատմիչ. առ  
'ի դիւրահասու լինել իւրաքանչիւր  
ազգաց կամ ծննդոց՝ դիպողագոյն վար-  
կայ զայս ձև շրջանակաց (Ա-ԺԲ) որովք  
զատուցանին հարք յորդուց, և նշանա-  
կին սքա շառաւելք կամ գծովք, և  
որ դիտէն իմասցի, զի յորմէ գիծն ե-  
լանէ ուղղակի կամ ընդ մէջ անցանե-  
լով նա ծնող է այնր՝ առ որ անցանէ  
գիծն պարաձայր կամ անսլաք (2) :  
Ձափ կամ անձկութիւն շրջանակացն՝  
ոչ ներեաց յաւելուլ և զանուանա կա-  
նանց Հեթմեան սերնդոց, այլ որք կա-  
միցինն գիտե՛լ գտցեն նշանակեալ այ-

լուր (543-4) : Ոսկէգոյն միջագիծն  
ցուցանէ զուղղակի կամ զանդրանկա-  
ծին ազգասերունդն, որ 'ի Հեթմայն առ  
հապետէ ցՀեթմուճ որդի 'ի Լեւոնի՝ լի-  
նի ազգ մետասան :


Ի պատկերէն աստի անցանելով 'ի  
ծանօթութիւն այլոցն ևս, նախ յան-  
դիման լիցի Բուսաւոցնակն (յէջ 17) ,  
զորմէ աւանդեալ է 'ի կարգի բնա-  
գրութեանս . իսկ աստանօր յաւելից  
ասել կամ կրկնել, զի որքան ցամաք  
և բազմաց անճաշակ իցէ անուանա-  
կարգութիւն Բուսաւոցնութեան Սի-  
սուանայ, մարթ է զնոյն ստուգագոյն  
մասն ասել բնական գիտելեաց երկրին,  
զի արանց հմտից քննեալ է և դասա-  
կարգեալ. իսկ հայերէն անուանքն, որ-  
պէս և նշանակեալ եմանդ, է ինչ որ  
ըստ նախնեաց են, և այնպէս համարե-  
ցայ պատշաճել, և է որ լոկ տառադար-  
ձութեամբ կամ թարգմանութեամբ  
յոյն և լատին բառիցն և իմաստից, և  
ոչ այլոց լեզուաց . և այս ամենայն հա-  
մարեցի իմովսանն 'ի պէտս այսր մա-  
տենի՝ և ոչ առ հասարակաց ընծայու-  
թիւն. զի գործ ծանր է և բազում  
քննութեանց կարօտ՝ զայսպիսին ճշդել  
և ճշգրտել, թող թէ որինադրել, Յուշ  
արարից և զայս, զի զմանս 'ի յառա-  
ջագոյն թարգմանելոցս անուանց՝ ուղ-  
ղեալ կամ փոխեալ եմ յետոյ, և ըստ

1 Cy gist le très noble et excellent prince  
Lyon de Lizingne Quint, Roy Latin du royaume  
d'Armenie, և ոչ Lyon de Lizingne, Quint  
Roy, etc. — Բայց ոչ կամիմ զանց առնել 'ի  
միջեւ, զի ոմանք 'ի Ժամանակագրաց համա-  
րին ընդ մէջ Բ և Գ Կոստանդնուպոլս թագաւո-  
րեալ կամ բռնաբարեալ զԺագն՝ այլոց և ան-  
ծանօթի ուրումն Լեւոնի. սակայն ցարդ ոչ ե-  
րևեցաւ. վասնորակն ծանօթութիւն կամ յի-  
շատակարարն ինչ յանուն սորին :

2 Ախալեալ է սակաւ ուրեք միմազորողին 'ի  
գիծան . օրինակ իմն, 'ի չըջնակի՝ երկու  
գիծք սլաքաւորք ձգեալ են 'ի Վասի՝ որդի  
Կոստանդնի Պալլի. յայտ է զի մին աւելորդ է,  
և զի՝ ոչ էր պարտ հպեցուցանել 'ի նոյն զա-  
ռաւելոյն՝ որ յերթօք նորա՝ Լիփոսէ՝ ելանեն և  
ձգին 'ի չորսսին որդիան՝ 'ի չըջնակին : —  
Յ՝ Թ չըջնակի տեսանի մի գիծ ձգեալ յՈչին

և յԱլինախ արքայորդիս, քանզի արգանդակից  
երկուորեալք են, որպէս և յայլ երկու զոյգ  
եղբարս կամ քորս նոցին. բայց միւս գիծն՝ որ  
յԱլինախէ ձգի 'ի միւս Ալինախ՝ սխալ է, հարկ  
էր յերթօք նորին յՈչնէ արքայէ՝ ձգել, զի առ-  
րա որդիք են Ալինախն այն վաղամեռիկ և Լե-  
ւոն Գ, նշանակեալք 'ի Ժ չըջնակի : — Վր-  
պեալ է ուրեք և յերանգս գլանոց, որովք կա-  
մեցայ որոշել զտոհմն և զտեսարս պայազատս  
այս կամ այն վիճակաց կամ պաշտամանց. որ-  
պէս, 'ի չըջնակի պարտ էր բացագոյն կար-  
միր լինել յատակի անուան երկրորդն Սմա-  
տայ Գուռնդատապլի՝ Թոփն մեծին Սմաւտայ,  
զի այն գոյն սեփականեալ զրեցաւ տոհմին  
Գուռնդատապլեանց. 'ի դէպ էր և շառաւեղին  
ուղղագոյն ելանել 'ի Սմաւտայ և անցանել 'ի  
զուսար իւր Մարինն 'ի Ժ չըջնակի :

այնմ կարգեալ 'ի վերջ գրոցս, ըստ  
բառական կարգի լատին անուանցն,  
Գիտուն լիցի և վաան պատկերացն ինչ  
բուսոց և ծաղկանց, զի ոչ անընտրողա-  
բար զազգ ինչ նոցին կերպարանեն, այլ  
զբուն զայն տեսակ զոր 'ի կիլիկիա տե-  
սեալ և գծագրեալ է գիտնոց ոմանց,  
Պիտանեզոյն և ցանկալի ևս էր ան-



ԱՆՔՈՐԻՆԻ ՔԱՆԿ

շուշտ Աշխարհացոյց քարան Սիսուա-  
նայ կամ Հայակիլիկոյ, յորում՝ ըստ  
հաւանագոյն կարծեաց՝ նշանակեցի  
զկողմանս գաւառաց և վիճակաց ժա-  
մանակի տէրութեան Ռուբինեանց որ-  
չայի ինչ գտի առ պատմիչս, բայց ոչ  
ուրեք ոճով և բովանդակ աւանդեալ:  
Քանի ըղձալի էր հաւաստել և զգիրս և

նշմարս նախադիշեալ երկերիւրոց և աւելի ևս բերդից, գղեկաց, աւանաց և վանորէից, այլ և զգիւղից հայաւնուանց. զԲերդորիցն, որք՝ եթէ օրէն իցէ ասեւ, սամէին և արծարծէին զմարմին պետութեան Սիսուանայ, ընդ նմին և զկարող հինաւորաց Հայկազանց, զկործ և զճաշակ նետից քաջաձգայն այնոցիկ և քաջաձիոց հարանց աղեղնաւորաց. ո՞ տայր և զգաղտնիս անդ գործեցելոցն և զբեցելոց՝ յայտնել. — և զՎանորէից, որք անշիջատորս վառարանք եղեն աղօթանուէր հոգւոց և բանասէր մտաց, ցնցուղք սրբամարտւոր սիրոյ, և յրջասփիւռ ճաճանչք իմաստից, յորոց կայծակունս տակաւին հրճուիմք և ջեռնութք և մեք՝ հնդեքումք և վեցեղութք սառնեղէն դարուք վերջացեալքս. և ոչ դարչիմք (եթէ միայն գտեալ էր) համբուրել զսեամս զոր կոխեցին, և զսենեակս յոր մինացան խոկացին և զբեցին՝ լամբրունեցիքն լուսաւորք, Սկեւացիք իմաստայեղքք, Մաշկեւորք հմուտք, Դրազարկք կարգապահք և հսկողք՝ ի վերայ թագաւորական հանգստարանաց, և համեմիչքն հոգւոց երգահան Արաբկաղնեցիք. վասն այնորիկ և ոչ խորշեցայ, մանաւանդ թէ և Խնորժեցի յերկարել զբանասիրական ծանօթութիւնս, կամ որ ինչ հայկականս գպրութեան պատշաճէր՝ ի ստորագրեալ սեղիսն և յանձինս. քանզի զինչ քան զմտաւորն և զհոգեւոր՝ գուցէ դերագոյն գովելի և ճառելի: Այլ ո՞ տայր ինձ զարթուցանել զայնպիսի խոհարանաց և զբարանաց զարթագանդս, զպատարաստականն երբեմն յառժամոյն կրկնումն և բեկեքեկումն վանդից երգոց և տաղից՝ յանկունս քարանձաւաց լերանց անսպառն Տաւրոսի, ուր արդ միայն հողմն հոմաձայն հնչէ վայրապար մելեալ ի մայրիս ծերացեալս և մանկացեալս... Եթէ անծանօթ առ ի մէջ մնաս այսպիսեաց վայրաց գիւղք, չեն ամենիմք աներկբայք և նշանակեալքս ի քարաին, բաց ի ծովեղերեսայն և քաղաքաց ոմանց. քան

զի մինչ և ցորդ չէ տրարեալ յերկրի անդ ուսումնական կամ եռանկիւնական չափողութիւն, և մարթ է ստորգրնութեան՝ հիշնովին տեղափոխել զհակայաձև լերինոն անդամ, և այլաձևեւ զսահմանս կիլիկիոյ, Երկբայականք են և յուղից նորոց անուանց հնչմունք կամ գրութիւնք, պէսպէս և անհնթեմ ծռեալք եւ ծեքեալք յեւրոպէացւոց, որոց՝ յայսմ մասին (յսոյութեան արեւելան անուանց) յոյժ ծանրալուր և խօթ են սկանչք. վասն որոյ և ուրեք ուրեք հարկ եղև զտարուկուսանաց նշանն(?) կարգել առ նոքօք. և ուրեք ևս իսպառ զանց առնել զանուամբքն. այսպէս և զորոյիչ գծովք սահմանաց գաւառաց և վիճակաց, զի հինքն անծանօթք են, նորքն կիսածանօթք և ոչ պիտանիք իմ գիտման. իսկ զընդհանուր սահման կիլիկիոյ՝ ընդարձակագոյնս ձգեցի, ըստ ժամանակի աշխարհակալութեան Մեծին Լեւոնի. մարթ էր անդրագոյնս ևս տանել ընդ հիւսիսի՝ ի վերահովիտս զուգառաջն Սարոսի, այսինքն Ծամանդեայ և Սառանայ, զորս ոչ պարագրէ չափ քարտիսիս, և որք դուն երեքք նուաճեցան ի միարայոցս, օրպէս և Մարաշ, զոր և ոչ իսկ ստորագրեցի, քանզի սեփական է Գերմանիկիոյ աշխարհի:

Ընդ քարտիցս այսոցիկ և տախտակաց՝ գտցին ի բազում օրինակս մատենիս և պատկերք ինչ գունագոյն երանգք նմանագրեալք ի ձեռագիր մատենից. որպէս, խորան մի լամբրունեան կամ Սկեւեռեան աւետարանի (33), գրելոյ յամի 1192. Պատկեր Գովհաննուս Աւետարանի և Զարոյր նկարեալք ի Պիծակ Սարգսէ՝ յամի 1331. Նորին դարձեալ ի նմին ամի՝ Պատկեր Դ Լեւոնի բազմելոյ յատեան դատաստանի (481), յորս է տեսնել և զտարազս ինչ զգեստուց ազգայնոց ժամանակին. — Պատկեր Զիւառորի Սիսուանայ (487) և Մեծագործն Լեւոնի ի միջի հոյակապ սիրապետաց իւրի իւրի աւերնչացելոց նմին (435). — Են և երկու արեւատիպ պատկերքս



Հերմոյ Պատմութիւն ընծայութեան գրոցն առ քահանայապետն Կլեմէս Ե՛ յԱւետիոն փռանկաց (340), և Այսապ առ զառուրիսն (392): Դարձեալ, ճշգրտատիպ պատճէն Պարգեւագրի Բլեւնի առ Գենուացիս (388), Պայմանագիր Կոստանդնի Տեառն Սարուանդիքարի առ Տիտոնեան ասպետս (210), և հաւասարն Արմանագրութեան Դեղնաքար զղեկի (273): Առանձինն ինչ գիտելիք միոյ միոյ ՚ի պատկերացս՝ աւանդեալ են յիւրաքանչիւր կարգի բանից, ըստ նշանակեալ իշից մատենիս:

Յետ զայս ամենայն ծանուցանելոյ հասարակաց հանդիպելոց գրոցս այսմիկ, մնան ինձ պարտք անուշակը հրատարակել և շնորհս և երախտիս՝ որոց միանգամ պէսպէս օրինակը նիւթականաւ կամ ուսումնական՝ օժանդակեցին ՚ի հիւսուած և ՚ի հրատարակութիւն սորին, եթէ ազգայինը և եթէ օտարը: Ի յետնոցս՝ նախակարգեմ զաշխարհոժանօթ աշխարհագիրն Քիբերդ (H. Kiepert) գերմանացի, որ յանձն էառ մարդասիրապէս զիւր ձեռագիրժ քարտ մի Կիլիկիոյ՝ եռապատիկ մեծ քան զվիմագրեալս ( $\frac{1}{100,000}$ ) ընձեռել ինձ. — ուղէկիւքն Ֆավր (C. Favre) և Մանտրոյ (R. Mandrot), վերջին քննողը Կիլիկիոյ, մինչև ինքնին հրատարակեալ ետուն ինձ պատկերս լուսագրեալս զՍոյոյ և զսոյլոց ինչ բերդից, որպէս նշանակեալ եմ ՚ի կարգի նոցին տեղագրութեան. — հմուտ և ազնիւ կոմսն Ռիան (P. Ed. Comte Riant) ուղղեակ ընկերութեան Լատին Արեւելից, որ զինդիրս իմ և զհարցուածս անգանդալ ընդր, և ինքնայոժար պարգեւէր զպատուական հատորս Դիւնանց այն ընկերութեան և զիւրոց երկասիրութեանց. — նորին ընկերութեան և Հնագիտաց կաճառոյն կցորդ, հետաքննողն փռանկ կամ

Լատին իշխանութեանց և գաղթակա նաց յարեւելս՝ Պ. Ռէյ (E. Rey), զիւրոց համանման գրուածոց օրինակս՝ ընդ հրատարակելն և առաքէր. — Ժաքսոն կամ ճէքսոն, (J. Jackson) քարտուղար Աշխարհագրական ընկերութեան Բարիզու, բարեսիրապէս փութայր ծանուցանել ինձ զնոր կամ զհին հրատարակեալ գրեան պիտանի վասն իմից գործոյս. — Եղուարդ Պուսիէ (Ed. Boissier) բուսաբան, որ մեկնեաց և ծանոյց ինձ զանուանս բուսոց և բուսաբանից ոմանց: — Իսկ ՚ի մերձակորաց ազգայինոց՝ որը նիւթականաւ սատարեցին ՚ի պատրաստութիւն պատկերաց և ՚ի տպագրութիւն մատենիս, առաջին, որպէս և յայլ բազում ազգային օժանդակութիւնս, եղև ծանօթ բարերարն՝ Պ. ՄիկրՏիՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ, պարգեւելով 1000 Ֆրանգ, և այլ ևս հազար՝ ՚ի գին տպագրեալ օրինակաց մատենիս, որը և առաքեսցին նմա իսկոյն. — Պ. ՅԱՎԱՅԷ ԻՉՄԻՐԼԵԱՆ, միւս ևս օժանդակ գրագիտաց, սակաւուք յառաջ քան զվախճանն՝ պարգեւեաց 500 Ֆրանգ. — սոցին համարնակ և համամիտ բանասէրն Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵՉԱՆԱՆ Խորհրդակից եղև սատարել զնելով ոչ սակաւ մատենս տպագրեալս ՚ի վասն մեր, ընդ սոսին հաճոյագոյն է ինձ յիշել և զլուսնայն՝ առաւելեալ սիրով քան քանական՝ զհանգանակեալն յոմանց աշակերտելոցն ինձ երբեմն ՚ի Ռափայէլեան և ՚ի Մուրատեան վարժարանս: — Ըա նալողը հանգամանաց տպագրութեան և մատենիս այսորիկ՝ ՚ի վերայ հասնեն, զի այս ամենայն նպաստ՝ սակաւ ինչ մասն է պահանջեալ ծախուցն, զորոյ ծանրութիւնս ստանձնեաց յիշատակելի պահու\*, յուսով ոչ անխնդիր և անպէտ մնալոյ մատենիս, այլ առաւել ևս՝ հայրենասէր և որդեսէր զթով, զոր սրբագոյն և անուշագոյն պարտս

\* Ի յիշատակ տպագայից՝ ոչ անճաշ համարիմ նշանակել և զայս, զի սկիզբն գրադարութեան գործոյս եղև յՊ յուլիսի 1883 ամի, և

յետ աւուրց ինչ, (այն է ՚ի 14 նորին ամսոյ) հանդիպեցաւ արկած հրդեհի վանացս:

գիտեմ' և ես' կրել և զրել. նոյնպէս և զամենայն խնամա՝ ձեռնառուացն ինձ' Հօր և Եղբարց, յընդօրինակութիւնս, 'ի սրբագրութիւն, 'ի տպագրութիւն և 'ի յօրինուածս ցանկի, և որ այլն ևս:

Եթէ այլ իմն օրինակ' այլ ոչ նուազ քաղցր և գիւրէ սրտի' յայտնել զսատարութիւն երկուց ևս ազգայնոց. մի այն՝ զոր յայտնեաց վաղ ուրեմն Տեղացոյց քարտն Շիրակայ, երբեմն իմ աշակերտ և այժմ բարեկամ բարիօղ, ՅԱՅԻՎԱ Թ. ՏԱՄԱՏ. որ և 'ի պէտս այսոր մատենի' ազգ ազգ մատոյց սպաս, գնիւք. ծանրագին գրոց, նկարելով զվերոյիշեալ պատկեր առմանն Այասոյ, լուսագրութեամբ պատկերաց Հեթմոյ Պատմի, և իւրով և վարձաւոր ձեռամբ ընդօրինակելով 'ի գրչադիր և 'ի տպագիր մատենից մեծի գրատանն Բարիլու՝ երկար բանս, որովք և առաւելելա՝ քան թէ նուազ գտանի և 'ի սատարողսն նիւթականաւ: — Միւսն՝ մերձաւորագոյն ևս ինձ' որչափ մարթ էր լինել 'ի վերայ երկրի, որ լոկ ՀԱՅ ՀՆԱՅԱՆՔ անուամբ կամեցաւ ծանօթանալ 'ի մատենիս, գերագոյն՝ որպէս սիրելութեամբն՝ և բանաւոր սատարութեամբն գտաւ, մատակարարելով զտիպս և երբեմն զխաղական իսկ հին դրամս զմերոց Սիսուանայց և զօտարաց, որոց պատկերք տեսանին յաճախօրէն 'ի տեղագրութեան Շովայնոյն նիւրիկոյ. այլ 'ի վեր քան զամենայն և բնաւից պիտանեցոյն՝ ընձեռելով գերկոսին նախայիշեալ օտիերս և աղբերս բանից, զՊատմիլ և զԳիտմաւնակագիրն նիւրիկոյ, յորոց թէ որքան օգտեցայ. 'ի տեղագրութեանս և 'ի պատմագրութեան՝ կանխաւ ևս ծանուցի. և ըստ այնմ կոռեցայն արգիւնք նորին և անխնայ նախանձ 'ի իոյզ և 'ի խնդիր Հայկական յիշատակաց՝ ըստ ընդաբոյս հօրամոցն բարուցն...

Յետինս այս յիշատակ հրապուրէ գիւս 'ի վեր ևս ելանել կամ թէ 'ի վայր ևս իշանել, յաւուրս իմ առաջինս. և 'ի լրումն ծանօթութեան սատարաց և սիրողաց Սիսուանայ և Նշխարաց նորին

հաւաքողաց՝ յիշել զերիցագոյնն 'ի մեքաղենայս, որ և սիրով նորին 'ի Հեթմոմանուն կնքեալ էր զմի յորդոցն, և մինչև ուրեք էր յայտնեալ Ռուբինանս ոսկի դրամոյ, գտեալ նորա զմիակն ցարդ ծանուցեալ ոսկի կոստանդնի, զմակագրեալն Սոյոք թերդն է Բապուշոր (216), զնոյն՝ տարօրինակ իմն կամ եթէ հաճոյ թուիցի՝ տարտպայման գիպուածով (զոր ստիպիմ յայտնել), իբրև անդուզական գանձ 'ի դրապանակին կրելով, և ոչ ուրուք գիտելով, նովիմք յետ վախճանին դիսպատիկ եղեալ յուղարկիւր 'ի հանգիստ հողոյ. յորում՝ յետ հրաժարելոյ յուղարկաւորացն՝ դիվաթաղին ըստ յուսոյ կրկտելով՝ գտանէ յանկարծ և յանպուրծ պահարանին զգահեկանն այն, և իբրև 'ի զաղտ դարանաց մահու և տապանի թաղելով, բերէ հաւատարիմ մոռք առ քահանայն հանդիսապետ յետին հանդիսին, (յետոյ առաջնորդ Ուստիս մերոյ՝ Տէր Գեորգ Հիւրմիւզեան). և սորա նոյնպէս տարեալ առ անդրանիկ հանգուցելոյն, ընդունի 'ի նմանէ զնոյն ոսկի՝ 'ի պարգևի մասին և 'ի մաղթանս հոգւոյ: և պահի արդ 'ի թանգարանի վանասոցս: Աստանոր երկամալ յառաջ՝ քան զայն գիպուած վիճակեալ և ինձ աշակերտիլ և յօգանալ, և արգ այժմիկ յետ յոբելինի ամաց՝ իբրև 'ի տարերս ընդաբոյս հայրենական ախորժակաց՝ ծծեալս 'ի նմանէ և 'ի սեղանոյ նորին հաւաքածոյ հնութեանց, յեռեալ զայս պրակ հայրենաճառ տառից, ըրձացայ նմին ինքեան առաւօտողին ինձ կենաց՝ յերկրորացեալ պահու (նորին կենդանագրու սկզբնազարգեալ), ձօնել և վերագրել. զմեծ նորայն սիրելութիւն Սիսուանայ գիտելով՝ քան զսրեան և զբնութեան. և այսու՝ վարկանիմ ամենեցուն իսկ համագգեացս հայրենասիրաց նուիրել զայս վաստակ, զայս խայրի անագանի. և՛ փոխարէն, յետ ներդաժմութեան՝ խնդրեմ' (և թէ ժողիմ և յայս) յորոց ունիցինն, ընծայել 'ի լոյս՝ որոյ և է ձեռք, զոր

պիտի և է յիշատակարան և ծանօթութիւն՝ յաւելի աւանդելոցս 'ի մատենիս, որովք՝ համարիմ մէն մի հանգոյ. | ցրս լուծանել յառեղծուածոյ եռադարեան տեւողութեան վերջին հարստութեան Հայկազնեայցս 'ի Սիսուան. հա-



ՄԱՐԵՍԻԱ — ՄԱՐԵՍԻԱ

մարիցին և ինքեանք առնել զայս շնորհ՝ | թելադրողիս, որ այսուհետեւ խոնարհախ ինքեանց իսկ, և ապա իւրեանց հի համբուրել զանգրադասէրն լու. ազգակցաց և ապագայից, քան եթէ | թիւն.

Հ. ՂԵՐԵՆԻ Վ. Մ. ԱԼԵՍԵ